ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2025 թվականի թիվ 156 – Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏԱՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՄԱՅԱԿ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետը, 12-րդ կետի 3-րդ ենթակետը և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գանձաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթը՝

ո ր ո շ ու մ եմ

1. «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գանձաքարի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել Հմայակ Մեհրաբյանի անվամբ՝ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գանձաքարի Հմայակ Մեհրաբյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Տնօրենին՝ ուսումնական հաստատության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական գրանցման:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-07-11 10:24:36 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ.հուլիսի 11
ք.Իջևան